



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

14 ապրիլի 2017թ. N^o 19-Ա

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Սպիտակ համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 14-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Սպիտակ համայնքի 2017 բյուջեի 1-ին եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունելու մասին
2. Սպիտակ համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու և Սպիտակ համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 52-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
3. Սպիտակ համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին
4. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու մասին
5. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը վարձակալության տրամադրելուն համաձայնություն տալու մասին
6. Սպիտակ համայնքի էստոնական թաղամաս, թիվ 4 շենք, թիվ 8 հասցեի բնակարանը սեփականության իրավունքով Գեորգի Զալալի Ղազարյանի ընտանիքին նվիրատվությամբ փոխանցելուն համաձայնություն տալու մասին

ԿՈՂՄ (8)

ԴԵՄ (0)

ՁԵՌՆՊԱՀ (0)

ՄԱՐԳԻՍ ԹԱՄԱՍՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ԽՈՅԵՑՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԻԻԹԱՐՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐՈՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ԳԱՐԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Handwritten signature

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. ապրիլի 14
ք. Սպիտակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 14 » ապրիլի 2017թ. N^o 20-Ն

**ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քննարկելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ներկայացված Սպիտակ համայնքի 2017 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման մասին համայնքի ղեկավարի հաղորդումը, Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Ընդունել ի գիտություն Սպիտակ համայնքի 2017 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման մասին Սպիտակի համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

ԿՈՂՄ (8)

ԴԵՄ (0)

ՁԵՌՆՊԱՀ (0)

ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՍՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ԽՈՅԵՑՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԻԻԹԱՐՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐՈՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ԳԱՐԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

(Handwritten signatures of the council members)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

(Handwritten signature of the council head)

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ



2017թ. ապրիլի 14
ք. Սպիտակ

Հավելված

Սպիտակ համայնքի ավագանու

„14„ ապրիլի 2017թ.

թիվ 20-Ն որոշման

Հ Ա Ղ Ո Ր Դ ՈՒ Մ

2017թ. 1-ի եռամսյակի դրությամբ Սպիտակ համայնքի բյուջեի կատարման ընթացքի մասին

Սպիտակ համայնքի 2017թ. բյուջեն 1-ի եռամսյակի կտրվածքով կատարվել է.

ա) Եկամուտների գծով 102.95 տոկոսով, նախատեսված 84773.8 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 87272.8 հազար դրամ:

-Սեփական եկամուտները (հարկեր և տուրքեր, այլ եկամուտներ, մուտքեր հիմնական միջոցների իրացումից) նախատեսված 21953.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 24852.2 դրամ կամ բյուջեն սեփական եկամուտների գծով կատարվել է 113.2 տոկոսով:

-Տեղական ինքնակառավարման մարմիններին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ՔԿԱԳ -ի ծախսերի ֆինանսավորման համար նախատեսված 975.2 հազար դրամի դիմաց հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվել է 1071.4 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 109.87 տոկոս:

-Պաշտոնական դրամաշնորհների գծով եկամուտները նախատեսված 61 845.6 հազար դրամի դիմաց կազմել են 61 359.2 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 99.21 տոկոս, որից 980.0 հազար դրամը նախատեսված սուբվենցիա է նպատակաուղղված երաժշտական դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման համար:

-Տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 18 281.4 հազար դրամ:

բ) Ծախսերի գծով բյուջեն կատարվել է 72,81 տոկոսով, նախատեսված 97968,2 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախսերը կազմել են 71 326,8 հազար դրամ:

1. Վարչական բյուջեի եկամուտներ

Վարչական բյուջեի եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 84 773,8 հազար դրամի դիմաց կազմել են 87 097,8 հազ. դրամ, կամ կատարողականը կազմել է 102.75 տոկոս:

